

ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄԱԿԻՆԴԻՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՒ

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) պատմությունը Հայաստանի Հանրապետությունում առանձնանում է յուրահատուկ զարգացումներով, որոնք իրենց նշանակալի ազդեցությունն են քողնում երկրի տնտեսության զրեք բոլոր ոլորտների վրա: Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ին պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ:

2000 թվականից Հայաստանում «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սկսվել է 1990-ականներից զարգացող ՓՄՁ ոլորտի իրավական կարգավորումը: Այդ օրենքով հստակ սահմանվել է, թե ովքեր են համարվում ՓՄՁ սուբյեկտներ, և ինչպիսի պետական աջակցություն կարող է տրամադրվել նրանց:

Որպես ՓՄՁ-ին ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հետևողական տնտեսական քաղաքականության տրամարանական արդյունք, վերջին տարիներին արձանագրվեց ՓՄՁ-ն բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: Իրականացվող ծրագրերը նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ քաղաքայիրերի տնտեսական զարգացմանը և անհամամանությունների հաղթահարմանը, ինչը ներկայումն Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է:

Այսօր ՓՄՁ-ն նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում: Հայաստանում ՓՄՁ-ներին ապահովում են երկրում ստեղծվող ՀՆԱ-ի շուրջ 30 տոկոսը, իսկ առանց զյուղատնտեսության և գուտ անուղղակի հարկերի՝ ՀՆԱ-ի պելի քան 40.3 տոկոսը¹: ՓՄՁ-ների ներկրումը ՀՆԱ-ում առավել մեծ է առևտի, շինարարության և ծառայությունների ճյուղերում, բացի այդ որոշակիորեն աճ է նկատվում նաև արդյունաբերության ոլորտում (տե՛ս աղյուսակ 1):

Նշանակալի է ՓՄՁ-ի սուբյեկտների դերը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Միայն 2006 թվականի ընթացքում ստեղծվել է ավելի քան 10 հազար նոր ՓՄՁ-ի սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 14.5 հազար նոր աշխատատեղ: Ընդ որում, 2006 թվականի ընթացքում նոր ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծման, ինչպես նաև գործող ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության ընդլայնման արդյունքում ապահովվել է 20.3 հազար նոր աշխատատեղ, որից 50.2%-ը ապահովվել է Հայաստանի Հանրապետության մարզերում, իսկ 49.8%-ը՝ Երևան քաղաքում²:

Երկրի արտահանման ծավալում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշիռը կազմել է 16.9%, իսկ զբաղվածների ընդհանուր թվում ՓՄՁ-ի սուբյեկտներում ներգրավված աշխատողների տեսակարար կշիռը՝ 35.1%: Նշանակալի է ՓՄՁ-ի դերը նաև բյուջեի ֆիսկալ ցուցանիշների ձևավորման գործում. ըստ 2006 թվականի տվյալների՝ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային եկամուտներում կազմել է 27.7%³:

¹ Միջազգային համայնքումներում ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռն ընդունված է հաշվարկել առանց զյուղատնտեսության գուտ հարկերի ՀՆԱ-ի նկատմամբ:

² Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության 2008 թվականի ծրագիր, էջ 1-3:

³ Նույն տեղում:

2007 և 2008 թվականներին ՀՆԱ-ի կառուցվածքը տնտեսության ճյուղերով՝
ըստ ՓՄՁ-ների և խոշոր կազմակերպությունների¹

	ՓՄՁ-ներ, տոկոս		Խոշոր ձեռնարկություններ, տոկոս	
	2007թ.	2008թ.	2007թ.	2008թ.
Արդյունաբերություն	27.9	22.3	72.1	77.7
Ծինարարություն	41.2	48.5	58.8	51.5
Առևտուր	47.3	51.4	52.7	48.6
Տրանսպորտ և կապ	28.6	20.8	71.4	79.2
Ծառայություններ	42.3	45.0	57.7	55.0
ՀՆԱ՝ առանց գյուղատնտեսության և զբու անուղղակի հարկերի	41.0	41.7	59.0	58.3

Սիջազգային պրակտիկայում երկրի տնտեսությունում ՓՄՁ-ների դերը և նշանակությունն առավել ամբողջական բնութագրվում են ՍԱԿ-ի կողմից մշակված «ՓՄՁ զարգացման ինդեքս» ցուցանիշով:

Այն ներկայացնում է ամբողջ ՓՄՁ ոլորտի մասնաբժինը երկրի տնտեսության մակարդակով և հիմնված է 3 հիմնական տնտեսական գործուների վրա.

- մասնավոր հատվածի տեսակարար կշիռը երկրի տնտեսությունում,
- ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում,
- ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատուժի տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում:

ՓՄՁ զարգացման ինդեքսը կարող է արտահայտվել տոկոսներով և/կամ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հաշվով՝ դրամական արտահայտությամբ (տե՛ս աղյուսակ 2):

ՓՄՁ զարգացման ինդեքսը Հայաստանում 2002-2008 թվականներին²

	Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսությունում, տոկոս	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, տոկոս	ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը, ընդամենը զբաղվածներում, տոկոս	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար	ՓՄՁ զարգացման ինդեքս, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հաշվով, ԱՄՆ դոլար
2002	81	34.4	28.2	739.9	58.1
2003	83	36.5	31.0	873.4	82.0
2004	84	38.6	32.9	1,104.4	117.8
2005	84	39.8	34.0	1,513.0	171.9
2006	84	40.3	35.1	1,996.0	237.2
2007	84	41.0	40.7	2,844.0	398.6
2008	84	41.7	42.1	3,689.0	544.0

Հայաստանում 2007 թվականին ՓՄՁ զարգացման ինդեքսը կազմել է ընդամենը 398.6 ԱՄՆ դոլար, որը բավականին ցածր է արևելաԵվրոպական երկրների միջին մակարդակից: Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ սուբյեկտները կազմում են տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակի 97.99%-ը: ԱՄՆ-ում փոքր բիզնեսի (ՓՄՁ) տեսակարար կշիռը կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում կազմում է 99.7%²⁰, ՀՆԱ-ի մեջ՝ 52%, իսկ զբաղվածների ընդհանուր թվաքանակում՝ 53%: Համաձայն ՏՀՁԿ (OECD) տվյալների³, Ֆրանսիայում և Իսպանիայում կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտները կազմում են 99.8%, ճապոնիայում՝ 99.7%, Ըվեյցարիայում՝ 99%:

¹ <http://www.smednc.am/index.php/lo/101/>, ՓՄՁ ԶԱԿ 2009 թվականի հաշվետվություն, էջ 14:

² <http://www.smednc.am/index.php/lo/101/>

³ OECD Science, Technology and Industry Outlook 2006, էջ 128:

Աղյուսակ 3-ից երևամ է, որ Հայաստանը ՀՆԱ-ում ՓՄՁ ոլորտի տեսակարար կշռով միջին դիրք է գրադարձնում բերված երկրների շարքում, սակայն ՓՄՁ-ում գրադարձների տեսակարար կշռով զիջում է բոլոր երկրներին՝ բացառությամբ Ռումինիայի, Ադրբեյջանի և Վրաստանի:

Աղյուսակ 3

ՓՄՁ զարգացման ինդեքսը մի շարք հետխորհրդային երկրներում 2007 թվականի¹

Երկրները	Մասնավոր հասվածի տեսակարար կշռը տնտեսությունում, տոկոս	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշռը ՀՆԱ-ում, տոկոս	ՓՄՁ տորյեկտներում գրադարձների տեսակարար կշռը, ընդամենը գրադարձներում, տոկոս	Սեկ շնչին ընկերող ՀՆԱ, ԱՄՆ դոլար	ՓՄՁ զարգացման ինդեքս, մեկ շնչին ընկերող ՀՆԱ-ի հաշվով, ԱՄՆ դոլար
Ալբենիա	70	56.5	62.6	17,000	4,208.9
Էստոնիա	80	73.7	55.6	10,230	3,353.6
Լիտվա	75	63.0	70.0	7,647	2,529.2
Խորվարիա	60	56.0	65.0	8,750	2,229.5
Ալվակիա	80	45.3	66.0	8,796	2,103.9
Լատվիա	70	58.2	69.3	6,869	1,939.0
Հոնգարիա	80	36.9	56.8	10,811	1,812.9
Չեխիա	80	32.7	56.7	12,097	1,794.3
Հայաստան ²	84	41.7	42.1	3689.0	544.0
Ռումինիա	70	55.0	21.0	4,544	367.4
Բուլղարիա	75	30.0	42.2	3,454	327.9
Ադրբեյջան	60	41.3	40.0	2,389	296.0
Վրաստան	70	29.4	32.0	1,776	125.3

Հաշվի առնելով այն փաստը, որ հայկական ՓՄՁ տորյեկտներում աշխատողների թվաքանակը, ինչպես նաև մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն բավականին փոքր է Եվրամիության երկրների համեմատությամբ, ՓՄՁ զարգացման ինդեքսը բացարձակ արժեքով նույնապես փոքր է ստացվում զարգացող և անցումային տնտեսությամբ այլ երկրների համեմատությամբ: Այս պնդումը ճիշտ է նաև Ադրբեյջանի և Վրաստանի դեպքերում:

Դիտարկելով արտաքին առևտրաշրջանառության մեջ ՓՄՁ մասնաբաժինը՝ կարելի է նկատել շնչին աճ ինչպես արտահանման, այնպես ներմուծման տեսակարար կշռում: Մասնավորապես, 2006թ. 16.9%-ի փոխարեն 2007թ. արտահանման մեջ ՓՄՁ տեսակարար կշռը կազմել է 17.4% (տե՛ս աղյուսակ 4): Սա, իհարկե, դրական միտում է, սակայն, եթե այս թիվը համեմատենք զարգացած կամ զարգացող երկրների հետ, այն բավական փոքր է: Մասնավորապես Ֆրանսիայում ՓՄՁ տեսակարար կշռուն արտահանման ծավալում կազմում է 30.0%, Չեխիայում՝ 36.2%³:

Աղյուսակ 4

Արտաքին առևտրաշրջանառության ծավալների դիմամիկան 2007 և 2008թթ. ըստ ՓՄՁ տորյեկտների և խոշոր կազմակերպությունների⁴

	2007թ.		2008թ.	
	ՓՄՁ	Խոշոր	ՓՄՁ	Խոշոր
Արտահանում(%)	17.4	82.6	17.9	82.1
Ներմուծում(%)	37.3	62.7	37.8	62.2

¹ Աղյուսակը կազմվել է EBRD "Transition Report 2008" Businesses in Transition, UNECE ՓՄՁ ոլորտին առնչվող տեղեկատվական բազայի հիման վրա:

² Հայաստանի ցուցանիշները ներկայացված են 2008 թվականի դրությամբ:

³ <http://www.insme.org/page.asp?IDArea=1&page=library&IDSection=103&Section=Statistics%20&%20Indicators&IDObjectType=2>, Measuring entrepreneurship & digest of indicators, 2009.

⁴ <http://www.smednc.am/index.php/lo/101/>, ՓՄՁ ԶԱԿ 2009 թվականի հաշվառվություն, էջ 33:

Կարելի է եզրակացնել, որ ՓՄՁ սուբյեկտները ներկայում հիմնականում իրենց համար թիրախային են համարում ներքին շուկան, չեն կարողանում բավարարել արտաքին շուկայի կողմից ներկայացված պահանջները և արտահանման ընթացքում հանդիպում են խոչընդուների կամ երկրի ներսում, կամ էլ արտաքին շուկայում իրենց արտադրանքը ներկայացնելիս:

ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների խնդիրները բազմաբնույթ են և տարրերվում են իրենց դրսևորման և խորության աստիճանով Երևանում և մարզերում: Հայաստանի ՓՄՁ-ի առջև ծառացող խնդիրների մեծամասնությունը վերաբերվում է պետական մարմինների հետ դրանց փոխսհարաբերություններին և ֆինանսական ռեսուրսներից օգտվելու մատչելիությանը: Վերջինը հիմնականում պայմանավորված է բանկերի կողմից առաջարկվող բարձր տոկոսադրույքներով: Այս խնդիրը հատկապես սուր է Հայաստանի մարզերում, ինչը պայմանավորված է գրավի առարկայի ցածր գնահատմամբ և ծեռնարկատիրական գործունեության իրականացման պատմության անհրաժեշտությամբ: Ստացվում է, որ սկսնակ գործարարը, որն ուզում է ներգրավել ֆինանսական ռեսուրսներ և սեփական գործ սկսել, չունի այդ հնարավորությունը:

ՓՄՁ-ների զարգացման համար խոչընդունելու համար հարկային քաղաքանության հատուկ մոտեցումների բացակայությունը: Քիչ են նաև ՓՄՁ-ների մասին վիճակագրական տեղեկությունները, որոնք թույլ կտային ավելի լավ պատկերացնելու ոլորտում առկա դժվարությունները և ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում՝ հատկապես ճգնաժամի պայմաններում:

ՀՀ-ում ֆինանսական միջոցների հոսքն առևտրի ոլորտից արտադրության ոլորտ տեղափոխելու համար հարկ ենք համարում առավել ուշադիր լինել այդ ոլորտում գործող փոքր և միջին ծեռնարկությունների գործունեությանը: ՓՄՁ-ների զարգացումը կնպաստի ոչ միայն նոր աշխատատեղերի ստեղծմանն ու բնակչության եկամուտների աճին, այլ նաև՝ տնտեսության ստվերային ծավալների կրճատմանը: Կարծում ենք, ՓՄՁ-ների զարգացման համար անհրաժեշտ կլինի ձևավորել բիզնես ցանցեր, ինչպես ընդունված է Եվրամիության երկրներում: Այս իմաստով կարեորում ենք նաև Հայաստանի միանալը ՓՄՁ-ների եվրոպական խարտիային: